

ԽԱՅՐԱԲԱՆ

ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍՐ

Ա. ՏԱՐԻ

15 ՄԱՐՏ 1912

ԹԻԻ 11

Խմբագրացես
Մ. ԻՓԷՔՃԵԱՆ

Արտոմատ
Հ. ԹԱԳԻՊԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կապանցիներ կործանում է (Գաբ.)

Հնազանդե ու հրամայես

Տասնոցը

Մանկանց համար (բանաս.)

Աշխարհի յեղափոխական մեծ շարժումները

Գալառային Լուրեր

Գ. ԱԹԷՆԵԱՆ

Յ. ՄԱՔՍԻՄՈՒՆԻ

ՄԵՐՈՎԲԵ ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

ԱՐՄԵՆ-ԵՐԿԱԹ

ԹԱԴԻՍՍ ԺԱՄԿՈՉԱՆ



ԱՄԱՍԻԱ

Տպագր. ՌՈՎՆԱՆԵԱՆ ԵՎ ԵԱՐՏՈՐԱՆ

«ԱՄԱՍԻԱ» ՀԱՅՏԷՆ

آماسیه ده «آماسیه» غزنه سی مدیریته

Խմբագրության «ԱՄԱՍԻԱ» Կիսասիայի հանդեսի-Ամասիա

Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15ին. բարբերէն եւ նոյեմբերէն բաժիններով: Թղթերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12 էջ. երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն տարեկան 24 թիւ պիտի տրուի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիա տարեկան	4	մեհիս	Արսասանական տարեկան	5	գր.
» վեցամսեայ	0.50	»	» վեցամսեայ	2.50	»

Բաժնեգիրքը բացարձակապէս կանխիկ է: Մանուցումներու համար առանձին նորոշումներ պայմաններ կը տրուին:

Տասը օրինակ «Ամասիա» սպասողին մէկ օրինակ նուէր:

Լոյս տեսաւ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ Օրաթերթը

ՔԱՂԱՔՂԱՆ, ՀԱՍՄԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ԿԻՄԱՊԱՇՏՈՒՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ Ս. Գ. ՀՆԶԱԿԵԱՆ

ԿՈՒՍԱՅԻՆՈՒԹԵԱՆ

Պիտի աշխատակցին Հնչակեան 13 է անկի մատուցական կարող ոլոր, որոնք իրենց հնչակեան աշխատակցին ծանօթ են հրապարակի ներկայ կարեւոր խիստ կարեւոր պատկառ մը զրոյցներու սահմանում: Կը թելադրենք բոլոր ազգայինները որ օգտուին, անոր ունեն լիք նոյն ու գիտական բովանդակութեան:

Պայմաններ՝ Պոլսոյ եւ Գաւառներ ու համար տարեկան 80 դր.

վեցամսեայ 45 »

երեւանեայ 25 »

Հաս.է՝ Վարչութիւն «Նոր Աշխարհի»

Կ. Պոլիս Բերա, պէտք փողոց թիւ 20

ԴԱՆՔԱՐԻԿ

Գեղարուեստական կիսամեայ.

Եւր եւ Փետրեան Հետեան Արամեան: Հասցէ՝ Կ. Պոլիս բօստակ թիւ 123:

Դաշնային խառնակիւր թիւ պիտի բաղկանայ 60 էջերէ, 30 պատկերով, 30 նորաներով եւ բազմաթիւ երգերով: Դաշնային նպատակն է խնամով հաւաքել, ամփոփել, ծաղկաւել եւ հրապարակել Յեղափոխական, Սօցիալիստական, Ազգային, Միջազգային եւ ժողովրդական հոսանքներու երգերն ու դիւցազներգութիւնները, որոնց հեղինակներուն պատկերներն ալ պիտի հրատարակուին, ինչպէս նաեւ անոնց՝ որոնց ձօնուած են երգերը: Ա. թիւը յոս պիտի տեսնէ 1942 Մարտի վերջերը: Բաժնեգիրքն է տարեկան (20 թիւ) 20 եւ վեցամսեայ 13 դր. Բաժանորդագրութիւնն անպայման կանխիկ է: Կը յանձնարենք բոլոր գեղարուեստագէտներուն:

ուած մը կ'ուզուի եղեր աւելցնել որ իւրաքանչիւր թերթի արտօնատէրէն 100-300 ոսկի աւանդ առնուի՝ իրեն դէմ դատ բացուած ու տուգանքի դատապարտուած պարագային՝ հատուցանելու ի վիճակի ըլլալու համար։ Ահա ամենամեծ կաշկանդումը մամուլի դէմ։ Կառավարութիւնը փոխանակ մամուլի զարգացման սատար հանդիսանալու ու անոր նիւթական դիւրութիւններ հայթայթելու, կ'ուզէ կաշկանդել ու զայն սեպհականացնել բուրժուա դասակարգին։ Որովհետեւ օրուան մամուլի ներկայացուցիչներու մեծագոյն մասը չի կրնար պահանջուած աւանդը հայթայթել, հետեւորար կամ պիտի քաշուի հրապարակէն կամ հարուստի մը թեւակութիւնը պիտի խնդրէ, ի հարկին անոր շահերն ու անոր դասակարգին շահերը պաշտպանելու գիտումով։ Եւ մամուլը պիտի դառնայ սեպհականութիւնը լոկ բուրժուա դասակարգին, ինչպէս են, անտեսական պայմանները։

Հապա սա գաւառական նորածիլ մամուլը ի՞նչ պիտի ըլլայ. եթէ ոչ իր ծիլին մէջ վայրկենաբար պիտի խեղդուի։ Քանի որ ձրի խմբագիրներ ու աշխատակիցներ ունենալով մէկտեղ իր գոյութիւնը ապրեցնել չի յաշտիր, տարեկան 50-70 ոսկինոց պիտե՞ն մը գծելով, ո՞ւր կը մնայ երբ իրմէ 100-300 ոսկի աւանդի դումար մը պահանջուի։ Ասիկայ վերադարձնումի ու վերածնունդի դէմ ո՞ճիր մըն է։ Բայց ո՞չ, չենք կրնար հաւատալ որ մեր սահմանադրական կառավարութիւնն այսպիսի անխոհմբայլ մ'ուզէ առնել և ժողովուրդն ալ իր սահմանադրական իրաւունքներու իւրումին դէմ անտարբեր մնայ։ Կը խորհինք թէ սահմանադրութեան նուիրուած մամուլի, բեմի ու խօսքի աշխատութիւնն ո՞նէ տան կաշկանդումի չպիտի ենթարկուի սահմանադրական կառավարութեան մը կողմէ, և հո՞ս, կամ այլուր եղած ձեռնարկներն ալ թիւրիմացութեան արգիւնք ըլլալու են, քանի որ այդպիսի կաշկանդումը, մեզի իրական կործանում կը տանի։

Գ. ԱԹԷՇԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐ ՀՐԱՄԱՅԵՍ

Մարդկային կեանքն ինքնին դպրոց մ'է ուր մենք տարիներով կը սորվինք հնազանդութեան գերագոյն դասը։ Ո՛չ որ ինքզինքը տգատ պէտք է զգայ այդ ուսումէն։ Իբր զաւակ պարտինք հնազանդիկ մեր ծնողքին, իբր ուսանող՝ մեր ուսուցչին, իբր դործուոր՝ մեր վարպետին իբր զինուոր՝ մեր սպային։ Կոնոննելը, որ մեզի կը տրուին մեր մանկական տարիքին մէջ, վերջը պիտի փոխուին աւ

ստիւթաբար վարիչ սկզբունքներու։ Ըստոյզ է թէ անհատի մը հանդէպ հնազանդութիւնը մարդս կրտսրկոյնէ, և սակայն արդար օրէնքի մը հպատակութիւնը զայն վերջին ծայր կը բարձրացնէ ու անոր կուտայ զօրաւոր կամք մը։ Ըսուած է թէ հնազանդութիւնը երբոր յարմար պատեհութեամբ և իմաստութեամբ կ'արտայայտուի՝ այն տան կամքին ճշմարիտ խումորը և դաստիարակութեան մէջ ալ անոր

կարեւոր մէկ ազդակը կը հանդիսանայ: Առանց հնազանդութեան, չենք կրնար հրամայել սորվիլ: Փեռառտէն կ'ըսէ. «Հնազանդութիւնը բան մըն է, բայց աւելի արժէք կայ յօժարութեամբ հնազանդելուն մէջ»: Յիշեալին խօսքը արդարացուցած ըլլալու համար ըսենք թէ ընկերութեան մէջ ստուար է թիւը այնպիսի անձնաւորութեանց, որոնք ոճիր մը չեն գործեր ոչ թէ անոր համար որ իրենց կոչումին հանդէպ անարգանք մը կը համարեն զայն և բարոյական սկզբունքն ունին իրենց համար յոկ զեկաւոր՝ այլ կը վախճան իրենց յանցանքին անմիջականօրէն յաջորդող որեւէ օրինական պատիժէ մը: Հոս, ահաւասիկ, օրէնքի հնազանդութիւնը յօժարութեամբ չէ որ տեղի կ'ունենայ այլ սկիսման հետակերպութեամբ: Մարդկային դատաւարակութեան կէտը կուգայ հպատակութենէ, օրինակի հետեւողութենէ և նմանութենէ: Ամէն պարագայի տակ, սակեղծումէ առաջ պէտք է հետեւողութիւն, արտադրութենէ՝ առաջ՝ նմանութիւն, ինքնատապալութենէ՝ առաջ՝ հպատակութիւն և քննական անկախ ոգիէ՝ առաջ՝ հնազանդութիւն: Առանց հլու թեան և համակերպումի, կարելի չէ հասնիլ իրական մեծութեան ու գիտակցութեան: Ամէն ծնողը եղած է զսուակ, ամեն ուսուցիչ՝ ուսանող և ամեն վարպետ՝ պարզ գործուար: Այս պայմանաւ է միայն որ ամեն ոք հնազանդութեան զպրտէն չըջանաւարտ՝ հրամայելու վարժարանը կը մտնէ:

Հայերս, խոյսնալ, կամ ծայրայեղ հնազանդող և կամ ծայրայեղ հրամայողներ ենք: Եթէ մենք այսօր խոտակի ու եպերելի մեծամտութեամբ մը վարակուած ենք, ո՞րչ ոչ անպատասարեր ու նողկալի մեծամտութիւնն է: Անհնազանդութեան և անատատութեան, սանձարձակութեան ու ծիծաղաշարժ մտաւարակութեան մարմնաւորութիւնը անյիշատակ ժամանակներէ յետէ կ'երեւի հայ կեանքին հետ ու կը

հասնի մինչև մեր օրերը՝ իր հետ ունենալով վնասարեր և վշտառիթ արգասիքներ: Ընկերական բարեացակամ յարաբերութիւններ տոճելու դժկամակ անհատը, ի հարկէ, իր պարտականութեանց անդիտակ պատգամներ կ'որոտայ իր ետամբիտումի և մեկուսացումի վայրկեաններուն մէջ: Իր ընկերը ոչինչ համարելու և անոր մէկ առաջարկութիւնը կամ հրամայողական պահանջը ի գին տալն ինչի ոտնառելու նկատառումը շատ սովորական հոնգամունք մը ունի մեր մէջ: Օտարազգի հրամայողի մը երկրպագելու արտակարգ ստրկութեան վարժուած հայուն համար ո՞րքան դժուար կը համարուի իրեն ազգակից եղող մէկու մը հրամանին հնազանդիլը:

Չպատշակելու այս ոգին, զաւայի է բնի որ, արդի նորահաս հայ սերունդին համար գոգցես ցեղային ժառանգականութիւն մը դարձեր է: Այս պարագան յաճախ կը չեւտուի թէ ընտանեկան սիրազեղ մթնոլորտին մէջ, թէ զպրտցական սուրբ ու նուիրական յարկին ներքեւ և թէ շուկայի գործնական կեանքին մէջ: Շրջապատը պարմանի մը համար արժանապատուութեան ծայրայեղ վիրաւորանք մը կը համարուի իրմէ նուազ զարգացած հօր մը, մօր մը կամ վերջապէս մեծի մը հրամանին, ուսուցչի մը յորդորներուն և գործուար կամ վաճառական վարպետի մը պահանջկատութիւններուն հնազանդիլը: Ուսանողին ո՞րքան դժնդակ կ'երեւայ վայրկեանական կատարումը զպրտցական օրէնքի մը, որուն չգոյութիւնը օրհնութիւն մը պիտի նկատէր ինք: Դեռահասակը տարեր թերութիւն մ'ալ եթէ ունին, ան ալ անվերադաժն ու աննկատ համարձակութեամբ մը յարձակիլն է ժողովրդական ինչ ինչ սովորութիւններու, նուիրականացած սկզբունքներու և աւանդապատիկ ըմբռնողութիւններու դէմ, տեսնց նախապէս հնազանդելու և ապա իր կարգին

Ջնջերու զանոնք: Եթէ կ'ուզենք ընու-
թեան վրայ տիրել, նախ պէտք է որ ա-
նոր համակերպինք: Եւ արդէն երիտա-
սարդ կեանքերու վաղ կամ անագան ա-
նօրինակ փճացումներուն ու մահացում-
ներուն պատճառը սոսկ պատուէրի մը կամ
օրէնքի մը հնազանդելու զգալի պակասը
չէ՞ եղած արդեօք: Անոնք, վերջապէս,
ամեն պարագայի տակ սուժողները պիտի
հանդիսանան թէ մատուցած պէտք, թէ բա-
րոյցապէս, թէ ֆիզիքապէս և թէ մանա-
ւանդ անտեսապէս:

Իրաւ է թէ զիցարանութեան մէջ Տե-
լեմօք կատարեալ հնազանդող մէր Մեն-
տորի խորհուրդներուն, սակայն այդ իսկ
պատճառով նա սպառազային հրամայող մը
զարձաւ: Գերմանիոյ, Ֆրանսո - Գերման
վերջին ճակատամարտին մէջ, յաղթական
զուրա գալուն պատճառը ուրիշ բան չէր,
բայց եթէ Գերման զինուորներուն ծայր
աստիճան հնազանդութիւնը իրենց սպա-
ներու հրամանին: Անգլիացի ու Ամե-
րիկացի ուսանողներուն և ուսանողուհի-
ներուն անհամեմատ առաջդիմութեան ըս-
տուղանկը իրենց հնազանդութեան ողին
չէ՞ եղած միթէ:

Հոս նաև դիտելի կէտ մը ևս կայ. այն
է զինուորական կեանքին վերջին աստի-
ճան հալ ու մաշի և տուայտանքի կենցաղ
մը համարուիլը մեր մէջ: Մինչդեռ այդ
կեանքն է որ մեզ պիտի ուսուցանէ մեր
բաղկացած հնազանդութիւնը, օրինապա-
հութիւնը, հաւատարմութիւնն ու քաջա-
պրտութիւնը՝ ի բաց վանելով եսապաշ-

տութիւնն ու կամակարութիւնը:

Ինչ են հանճարները, եթէ ոչ հնազան-
դողներ իրենց կոչումին ու իրենց ընդու-
նակութեան՝ զանոնք փայլեցնելու մեծ
գործին համար: Ճշմարիտ հնազանդու-
թիւնը իր անձէն դուրս՝ անհատական ար-
տաքին ազդեցութենէ մը չ'իշխեր, այլ
ներքին, այսինքն, խղճի ու բարոյական
աշխարհին: Ինչպէս որ սերոյ զգայութիւն
կը նուիրագործուի, երբ ուրիշի մը բա-
րիք կ'ընենք, նոյնպէս ալ կը սրբագոր-
ծուի խղճի օրէնքը, երբ անոր կ'անսանք:
Իսկ եթէ չենք կրնար հնազանդիլ անոր,
որ մեր ամենէն անկեղծ օրէնսդիրն է,
այն ստան անպատճառ պիտի ստիպուինք
հպատակիլ օրէնքի տարբեր գործողութիւն
մը, ինչ որ անպատուարեք է: Նախա-
պէս հնազանդիլ սորվող մը բունակալ հը-
րամայող մը չըլլար այնքան, որքան հնա-
զանդիլ չ'սորվող մը: Ճիշտ է այն խոս-
քը, որ կ'ըսէ թէ դրական կամքը գոյու-
թիւն չ'ունենար, առանց ինքզինքին վրայ
իշխելու կարողութեան, զոր հնազանդու-
թիւնը միայն կ'ուտայ: Վայթէն կ'ըսէ.
«Հնազանդէ՛, եթէ կ'ուզես որ օր մըն ալ
քեզ հնազանդին»: Հրամայելէ առաջ
պէտք է հնազանդիլ փորձառու և գերա-
կայ անձնաւորութեանց արդար կամքին,
ընկերային, գիտական, անտեսական և
այլ կեանքերու սովորութիւններուն և
պահանջներուն, որպէսզի կարելի ըլլայ
տիրանալ առաջդիմութեան, ինքնատու-
թեան, ինքնավարութեան և ալլավարու-
թեան մեծագոյն գաղտնիքներուն:

Յ. ՄԵՂՍՈՒՆԻ

ՏԱՍՆՈՅԸ

(Նորովէպ)

Նուէր անունի՝ որոնք կարօք:

կը խաչեն ճարտ փարային:

Երկար ու տառապանքի ճամբորդութենէ
մը վերջ, յոգնած ու յուսահատ նստայ
Ս. քաղաքի պողոտային վրայ: Ամբողջ

24 ժամուայ քաղցի աղեղալար ցաւէն
ուժասպառ ինկայ, հոգնավար փչող կոճ-
ղի մը պէս:

Իրիկուն է. վերջապես հիւ ծուկերով
կը պնդուէր ինչերու սէգ կատարնե-
րն: Հեռուն, ձորին մէջ գիշերը իր սե-
թեկը կը արեւ յամբարար: Ու խա-
ւարը իր սե ու մաւղ ծոցին մէջ կը
խելլէ ինչին յոգը վերջապէս: Ան-
համբերէ լոյսի ճառագայթներ կ'երկարին,
սուրի փայլուն չեղբիւրէ արծակուած շո-
ղիւնին նման ու կը խրուին վիրաւոր
որտիս մէջ: Երբեմնի ծագուն կապոյտը
տխրորէն երկիրը կը զիտէ իր բիւրուոր
առաջերով ու կ'անիծէ զայն թորթեկով
հրախա իր աչքերը: Ահաւոր է կայու-
թիւնն, վայրկեաններս ալ ճակատագրա-
կան...: Ծովուն արիքներուն հեծեման-
քի արեւը լաօնեւն կը տարածուն
սե խաւարին մէջ: Իսկ մաւղ քույր,
ուրուականներու որջ մը կը դառնայ:
Պէտք էր հեռանալ այս ահաւոր դոյզնի
բայց մը, մը կողմ...:

Վայրկեան մը թաղուեցայ մանկական
զուարճայի երազներու մէջ, սակայն հոն
ալ տեսայ դառն պատկերներ ու ընդոտ
վեր նետուեցայ հեռուն, աւելի հեռուն
երթալու համար: Յանկարծ կառքի մը
թաւալումին ձայնը լսեցի: Զիւրը յոգ-
նած ու քրտնախոր կը խրանջէին ուժգ-
նորէն դուրսով գետնը. անօթի՝ էին:
«Հապ՛ն», վայրկեան մըն ալ և ահա կե-
րկրնիդ պատրաստ կ'ըլլայ» հնչեց կուռ-
պանին քաջալերող ձայնը և մտրակի հար-
ուածով մը գգուեց զանոնք: Հէք կեն-
դանինը քառամբակ արշաւեցին բա-
ջերնին հովերուն տօղով, իսկ աւագները
անիւներուն տակ խշխշային, հեծեցին,
փշուր փշուր եղան...: Անթարթ հետե-
ւեցայ անբան անառուներուն, որոնք
թշուառութիւնը չարկած կ'արշաւէին արի
մը գարիի համար ու արիւր արշաւէին
այսպէս՝ դեռ երկար ու ձիգ տարիներ:

Լուսնեան հետ ուրուականները նորէն
սկսան իրենց ահաւոր գործը: Փողփո-
ղուն լոյսի սրածայր ու արիւնագոյն և

րիզները վերադառն երկարեցան: Անոնց
կարմրութեան մէջ տախտիկայ հրաշքը մը
կար, պէտք էր մտնելու. և մի ցէր մե-
տնար. մանաւանդ քոյրէ ստուարեկող
էակ մը, երբ կ'ըզայ թէ այդ յորդառատ
լոյսին տակ ճոխ սեղաններ կան, դառն-
ապին կեանք, երազում հանգստութիւն
և դեռ այնքան անվերջ վայելքներ...:

Ու կ'ըստ քայրէաս կ'ուզեմ այն կողմը
զապեղով լացս ու բիւրեղացնելով արցուն-
քը այտերու վրայ: Ամայի է ամէն կողմ
զաժան լուսնիւնը կը ծանրանայ սե խա-
ւարին հետ ինչպէս գերեզմանի մը կա-
փարիչը: Իւրաքանչիւր քայլափոխիս,
ուրուականները կարծես կը դոյզին իմ
առջև: Ի՞նչ կ'ուզեն ինձմէ, իմ թշուառ
կաղութներէս, չեմ գիտեր: Ինչո՞ւ ստիւ-
միս կրկնապատկումը կըզգամ: Ա՛խ,
այդ ուրուականները, սիրոյ և բերրայից
օրերու կարօտով տանջուած ոգիներ,
թշուառութեան տակ չնչանեղձ եղող ման-
րիկ հիւզէներ, որոնք ամէն գիշեր կը
տանջուն ու կը տանջեն, սե քոյրեց-
ներով կը շրջապատեն հէք արարածներ ի-
րենց բախտակից ընկու գիտումով: Եւ
միթէ ես ալ չի՞ պիտի կապեմ՝ այդ ոգի-
ներէն մէկը, տանջուող ու տառապող
ոգի մը...: Ո՛հ, ի՞նչ սե գաղափար...:
Յուսահատական դառն մտածումներ կը
փոթորկեն գանկս: Տխրութիւնը որտե՞ս
վրայ կուտակուած է սե ամպերու պէս,
մաւղ է հողիս: Ո՛հ, կեանքը որքան
սիրալի է և մահը որքան դաժան: Բայց
միթէ յուսահատութիւնն ալ մահ չէ՞,
ինչո՞ւ յուսահատիլ քանի որ կեանքի սէրը
կը բոցալաւի մէջս: Ո՛վ կեանքիս ճի-
ւաղ թշնամիները մէկդի թողէ՛ք ձեր մահ-
բոտուեր գաղախոյնները, կեանքը քաղ-
ցը է, ես կեանք կ'ուզեմ, կեանք...:

Անուշ քուն մը թարթիչներու վրայ կը
ծանրանար ու սիւքը, հեշտին օրօր կ'եր-
գէր նման մայրական գորովայի օրօրին:

Փողոյին մէկ անկիւնը, մեծատան մը դրան առջև, գլուխս քարին, սեւ ու յուրա նոյր իւր անկողին, իսկ մեզմ' ինչիս ալ իւր վերարկու քնայայ այնպէս՝ ինչպէս կը քնանան տանջուածները: Մ'ի, այն գիշերուան երազներս...

Անշուք տան մը խրճիթին մէջ խեղճ բնասարքի մը բոլոր անդամները ցրտասարսուռ կը դողդղան մոմի մը ազօտ լոյսին շուրջ բոլորուած, անոնց այսերը ախոյս էին, ինչպէս նուազելու մօտ հիւսանդի մը գունատ այտերը, նուազուն աչքերուն մէջ կարօտ: Ժուրջ յաւի մը կիզումը կը պատկերանար, իսկ ծնւած դէմքերսին գերեզմանէն փախչող մեռելներու մէջ մէկ ուրուականներն էին: Մ'ի, տանջուող շողիները... Ո՛վ դժնեատեղ պատկեր, ո՛վ մահառարտու կեանք, մ'անչև ե՞րբ այսպէս պիտի տառապ'նք, ես նոս անծանօթ միջնորդի մը տակ, ուր ծանրաշունչ է օդը, որուն ծանրութիւնը սրտիս վրայ կ'ազդէ, ինչպէս միտած դանակ մը կուրծքն մէջ, իսկ նոս նայրենի խղճուկ երգիքին տակ ծնողքս, որոնք կը տառապին կարօտով ու անձկայրեաց կրօնական իմ ստոր փառայիս որ քաղցէն չի մեռնին. սեւ եւ րազ...:

Առտուն միջնադին արթնյայ ու եկեղեցիին կոչնակին ձայնը իւր ուղեկից ունենալով ազօթելու գացի: Երկա՛ր ու սրտառուչ ազօթեցի: Հոգեկան մխիթարութիւնը ազդեց իմ վրաս ու զգացի թէ յուսախաւ նոգւոյս մէջ դեռ մարած չէր խորհրդաւոր սպասումը Աստուածային սուրբ ձեռքի մը, որ քեանքս պիտի ազատէր և ուժ ու կորով ներշնչելով իրր գործաւոր պիտի աշխատէի որպէս զի դժբա՛ւր զրկեմ նայրենիք, ուր կրօնական յուսանատ ու նոս ազուն վիճակի մը մէջ թրչուտաւ ու ձեր ծնողքս...:

Բանուկ շուկայի մը մէկ անկիւնը նստած

Ամասիա

ակնապիչ կը դիտեմ անցորդները, որոնք փողի զանակներու մէջ փաթթուած ու կեզօծ էակի մը նման կ'անցնին ուրախ զուարթ: Յաւատանչ նայուածքներս կը մարին անոնց վրայ, սրտիս մէջ չոր հացը ջուր կը կարի, հոգւոյս մէջ քաղցը հոգի կ'առնէ իսկ նուազուն աչքերուս մէջ կը կրեմ ծննդավայրիս ու ծնողքիս պաշտելի նկարները, նկարներ՝ որոնք աւելի կը տառապեցնեն զիս քան կը շանգստայնեն:

Ու կ'անցնի անգութ ժողովուրդը, որուն խիղճը ժայռ է կտրած, կ'անցնի հրպարտ ու սիգածեմ, առանց իսկ ակնարկ մը նետելու: Ինչո՞ւ հպարտ հոգիները գութի նշոյլ մը չեն ցուցներ իրենց քառայած սրտերնուն մէջ: Ինչո՞ւ անձնասէրները, հեշտասէրները չեն խղճար թրչուածներու վրայ և մանաւանդ այն բանուորներուն՝ որոնք հեռաւոր երկիրներէ եկած կը տանջուին անօթի ու անօգնական... Ո՛վ Աստուած, միջև ե՞րբ պիտի մնան անոնք իրր պատենէներ տխրութեան ու զուարթութեան մէջ:

Այդ անխիղճներուն մէջէն ալեգարդ ծերուկ մը դէպի ինձ կուգար. ափը սեղմած ու շրթները երկրուն «օգնութիւն մը խեղճ դարիպ բանուորին որ երեք օրէ իվեր անօթի է ու անգործ...» նեկեկացի լալանառաչ:

Մ'ի, որքա՛ն մեծ էր իմ ուրախութիւնը երբ ծերուկը փոքրիկ պղինձի կտոր մը կը ստանցներ ափիս մէջ: Տասնոց մը, ո՛վ օրհնեալ պղինձ ինչպէս քեզ թող չի պաշտեն դրամատէրները երբ դուն կեանք մը կ'արժեւ և չգոյութիւնդ մահն է մարդուն, մանաւանդ հէք բանուորին... յիշո՛, տասնոց մըն է բանուորին կեանք՝ մահուան, իսկ մա՛րը՝ կեանքի փոխարկույր:—

Անարժէք պղինձի կտոր մը, տասն ու ցը...

ՍԵՐՈՎԵՏ ԵՒՐ-ՅԱՎՈՐԵԱՆ

ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ

Պսկի ֆոլ են հազնում լեռներ, հարսի նման շիկնեցին,
 հաղաղ ծովը մեղմիկ ժպեց արեալոյսին շողավառ.
 Է՛յ քեզ ի՞նչ պէտք, արձագանգ ես քալիս խեղճի արցունքին
 Գիշերները ցուրտ, անհուն սանջրում ես անգագւր:

Արեալոյսը ժրպտում է քեզ, եղի՛ր երգիչ բնութեան,
 Երգի՛ր ծովը, երգի՛ր վարդն, երգի՛ր սէրը ու գարուն,
 Է՛յ քեզ ի՞նչ պէտք տառապանքի սանջրող. խրդնուկ մարդկու-
 ինչո՞ւ դաժան, սեւ ձրմեւր բոյն կը շինի քո սրբոյն: [քեան

Բայց ովքե՛ր են, քեզ են դիմում, պատռած, կեղտոտ, սեւ շո-
 նին ովքե՛ր են, լացող աչքեր, բիւր թիկունքներ կորսացած [բեր
 Ա՛յն ովքե՛ր են, անուր, հիւանդ, անհայ ցօթի անարգել.
 Լացի՛ր սիրս իմ, սանջրի՛ր անվերջ, քեզ են դիմում անկասկած

Չէ՛, մի սիրիւ արեալոյսը, ծովը, գարուն, գիշերներ,
 հաչրդ կրքի՛ր, սանջրի՛ր յուսով, լացի՛ր ժրպտով յաւիտեան.
 Չէ՛, դու վեհ ես ապրիլ ուզում. լոյսի գիւնուր անվեհեր -
 Արցունք, միջիս, սանջանգ ու յոյս մարդկանց համար միմիայն:

ԱՐՍԷՆ - ԵՐԿԱԹ

Պատմական

Աշխարհի Յեղափոխական Մեծ Դարձումները

Գ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

«Մարդը ազատ ծնած է, եւ ամեն տեղ
 շղթաներու մէջ է...»

Ժ. Ժ. ՌՈՒՍՕ

Իմացական ու կրօնական յեղափոխու-
 թիւնները 15րդ և 16րդ դարերուն մէջ
 այնքան փառաւոր կերպով կատարեցին
 իրենց հսկայ գերերը, միանգամ ընդմիջտ
 լայնօրէն բանալով մարդկային մտքին ու
 հոգիին կուրացած աչքերը, և այլևս
 պարզելով անոնց առջև տեսողութեան
 նոր ու շեռաւոր հորիզոններ, հորիզոննե-
 րը չազատեցան, հաւասարութեան ու եղ-
 բայութեան: Եւ սակայն ասով ալ դեռ

ամէն բան չէր լրացած: մաքի ու հոգիի
 ազատ թռիչքը արգիլող բոլոր խոչնդու-
 ները իսպառ չէին անհետացած: Եթէ
 տգիտութեան ու նախապաշարումի ժան-
 գոտ շղթաները փշուրկեցան, իմացական
 յեղափոխութեամբ, եթէ Պապական-կղե-
 բական կաշկանդիչ պարսնները քակուե-
 ցան կրօնական յեղափոխութեամբ, թա-
 գաւորներու և իշխաններու ծանրածանր
 լուծերն ալ թօթափուեցան մարդկային

այն բնագավառում անսեղիմաբար շարժումով, որ կոչվում էր փառաբանական յեղափոխություն:

Ուրեմն բանանք պատմութեան թառեկաբանին վրայ կատարուող այդ խորհրդագրորդ առաջին երրորդ վարագոյրը արևելահայերէն, որուն մէկէ աւելի զարնուրէի տեսարաններուն մէջ առաջնորդ կուգան կարմիր յեղափոխականները յաղթական, ազատութեան եռագոյն դրոշմի ձեռքին՝ յայտարարելով ամենուրեք, «Մարդը ազատ է, եւ պէտք է որ ազատ լայրի»:

Բանապետներու անասան աթոռները զգրեցնող այս անկուն հեռանկարն էին ահա որ վերջապէս աշխարհին հասկցուցին թէ ինչ լսել է մարդ, և ինչ լսել է մարդկային անհասակացություն:

Բազաքական յեղափոխութիւնը կ'սկսի Վրդ գարուն, և կը շարունակէ իր անխափան դարձնելութիւնը մինչև այսօր, իր պիւքները տարածելով Անգլիայէն Ամերիկա և ապա Ֆրանսայէն զէպի պատմական Արեւելքը, և ալ մինչև իսլամական Զինաստան: Երեք դարէ ի վեր քաղաքական աշխարհին մէջ կատարուող այս ընդհանրական շարժումը թէպէտ անձանաչլիօրէն փոխած է այս մեր ապրած կեանքն ու երկիրը, բայց կարծես դեռ չէ յաջողած կատարելապէս ի գլուխ հանելու այն մեծ գործը, որ կոչուած է իսլամ վերադարձը մարդ էակին ճակատը խորհմեղնող բազմատարր կնճիւնները, և ինչպէս...

Բազաքական ողորդութենէն անդին է որ մեր առջև բացուած կը գտնենք յուզումնալից դարձնելութեան այնպիսի բնագործակ դաշտագետին մը, որ մեզ իսկապէս պատի առաջնորդէ դէպի քրիստոնեական ազատութիւնը, դէպի ճշմարիտ ազատագրումը զրկուող ու տառապող բազմամիլիոն ժողովուրդներու, և ահա այն

ատեն՝ այն ատեն միայն վիզթոր Հիւկոնի ա' պիտի դադրին ողբալէ իրենց քուառները, և սառապող հէք մարդկութիւնն ալ հասած պիտի ըլլայ այն բազմալի նաւանագիտը, այն բազկատարած գիրկը, որ 2000 տարիէ ի վեր մեր մեծ վարդապետը և քաղաքակիրթ մարդկութեան պաշտելի առաջնորդը՝ Յիսուս բացած Ձեզ կրաստէ ի'վ թշուառներ, և բարձրագոյն ձեզի կը կանչէ անդադար. «Եկե՛ք առ իս անեմայն աբխասեայի եւ բեռնաւորեայի, եւ ես հանգուցից զձեզ»:

Բազաքական այս յեղափոխութեան իսկական ընդթիւ ճանչնալու համար, լաւ է որ նախ վեր առնենք այդ ժամանակաշրջանին՝ ժողովուրդներու և թագաւորներու միջև տիրող այն բնական միջոցները, որոնք յառաջ բերած էին քաղաւորներու Աստուածային իրաւանց վարդապետութիւնը, հզօրապէս ազդելով Եւրոպայի պատմական յառաջդիմութեան վրայ այնպէս, ինչպէս պապական ու կայսերական իշխանութիւնները՝ միջին դարու վրայ:

Ըստ այս վարդապետութեան «Ազգը այն մեծ ընտանիքն է, որուն Աստուած ծնաւոր գլուխը թագաւորն է, Թագաւորին պարտականութիւնն է հօր մը պէս կառավարել, մինչդեռ ժողովուրդին պարտականութիւնն է հնազանդիլ իրենց թագաւորներուն, ինչպէս զաւակները իրենց հայրերուն: Եթէ թագաւորը սխալ կը գործէ, կամ անգութ ու անարդար է, ապա այս պարզապէս ժողովուրդին զրեւազդութիւնն է. ո'չ մէկ պարագայի տակ չիտակ կ'ըլլայ անոնց համար ապստամբիլ թագաւորին իշխանութեանը դէմ, ինչպէս զաւակներու համար չիտակ չ'ըլլար ելլիլ իրենց հօրը դէմ: Թագաւորը պատառխանաւոր է Աստուծոյ միայն, և ժողովուրդը՝ հոռ հնազանդ, պարտի Աստուծոյ միայն թողուլ անոր բոլոր գործերը:

թագաւորը չարաչար կերպով կը գործածէ իւր իշխանութիւնը, ժողովուրդին բոլոր ընկիւթը չէ ուրիշ բան, բայց միայն ազա- չիկ անոր որ ուղղէ իւր սխալները, կամ աշօթեկ Աստուծոյ»

Մեծն Լուդովիկոս ժԴ-ի արքանապետը՝ հոեաւորն Պախենէ կ'ըսէ, «Թագաւորներն Աստուծոյ սպասարկուներն ու անոր փա- խանարդներն են երկրի վրայ»։ «Թագա- ւորի մը գահը մարդու մը աթոռը չէ այլ նոյնինք Աստուծոյ գահը... Թագաւորի մը գահը սուրբ է, և սրբապղծութիւն է անոր վրայ յարձակում գործելը»։ «Անոնք Աստուածներ են, և մասամբ Աստուածա- յին անկախութեան ալ մասնակից»։

Անգղիոյ Յակոբոս Ա. թագաւորն ալ տ- մեմատիւրունկ հաւատքով տոգորուած էր «Թագաւորներու Աստուածային իրաւանց տեսութեան» նկատմամբ, և կը կարծեմ թէ երկրի ժառանգական իշխաննե- րը Տէրաջ օժտուներն են, և թէ իրենց իշխանութիւնը ոչ մէկ կէտով կրնայ հար- ցադնդուիլ կամ սահմանափակուիլ ժողո- վուրդին, կղերականին կամ բարդամենդին կողմէ։ Ահա բուն իսկ իր խօսքերը — «Ինչպէս անհաւատութիւնը ու հայհոյու- թիւն է վիճարանիլ Աստուծոյ քրաժ գոր- ծերուն վրայ, նոյնպէս ալ մեծամտութիւն ու անխոհեմութիւն է հպատակի մը հա- ժար վիճարանիլ թագաւորի մը քրաժ գոր- ծերուն մասին, և ըսել թէ ան չի կրնար ընել այս կամ այն բանը, թէ սխալ կամ չեղտակ է թագաւորին այսինչ գործը։ Ինչպէս քարի քրիստոնեաներ կը դոհանան Աստուծոյ կոմքովը, որ իր խօսքին մէջ կ'ըսանուի, նոյնպէս ալ քարի և հր- հպատակներ պարտին զոհանալ իրենց վե- հագեալին կամքովը՝ որ կը յայտնուի իր

(շարունակելի)

խօսքին ու գործին մէջ»։

Մեր յաջորդական յոգուածներուն մէջ պիտի տեսնենք թէ ո՞րքան սուղի նստան սյապիտի ծրուած զաղափարներն ու համո- ղումները թէ՛ թագաւորներու և թէ՛ ժո- ժողովուրդներու համար, և վերջապէս յե- ղափախական ուժեղ արամաւորանութիւնն էր որ եկաւ հաստատելու թէ ժողովուրդի մը Աստուածային ու անփոխանձեկի իրա- ւունքն է կառավարել ինքզինքը, և աւելորդաւ իր ճակատագրին։ Այո՛, որքան սուրբ է թագաւորի մը անձը, նոյնքան և տւելի սուրբ է հասարակ մահկանացուի մը, պարզ անհատի մը անձը։

Բայց բոլորովին ալ միակողմանի չի խորհինք կառավարական այս եղանակին նկատմամբ, քանի որ միջին դարու ժո- ղովուրդներուն համար փորձուեցան ուրիշ շատ մը եղանակներ, և առիկայ գտնուե- ցաւ ամենայաւը. «վեպ առոր՝ աւառա- կան լորտերու աղնուապետական կառու- վարութեան անողոք բուծը. վկայ կ'ընտա- րականներու Աստուածապետական կառու- վարութեան բանական հանգամանքը. վեր- ջապէս վկայ Իսաայական քաղաքներու ռամկավարական ուժեղման տակ՝ ընկերային կեանքի խռովայոյզ վիճակը»։ Միայն ինքզինքն սխալ կողմը այս էր. չորս հինգ դարեր առաջ բանող կառավարական ե- ղանակ մը, այն է բացարձակապետութիւ- նը, անկարելի էր որ բանէր չորս հինգ դարեր ետքը եկող ժողովուրդներուն մէջ, ինչպէս անկարելիութիւն մըն է այսօր թուրքիան կառավարել առանց սահմանա- դրութեան։ ժամանակին հետ քաջել. ա- հա այն օտկեղէն նշանաբանը, որուն պէտք է հետեւին անհատներ, ժողովուրդներ ու իշխաններ։

ԹԱՂԵՈՍ ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԳԱԻԱՌԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԼՏԳՄ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Առաջին կարգի բնորոշներու ցանկը պատրաստուած է և հակառակ օրինական 15 զրի սեղ 7 օր վերջը այսինքն ամսոյս 1 ին կամ 15 ին բուն միւնթէխիպը սահմանու ընտրութեան պիտի ձեռնարկուի։

Կիմանանք թէ բաւական մեծ քանակութեամբ հայերու և մասնաւորաբար Յուներու 25 տարիքը յաջնողներու անունները չեն արձանագրուած։ Արդեօք այս ապօրինութիւնը դիտումնաւոր է թէ ոչ լոկ թերացման արդիւնք։

ԼՍԱՐԱՆՆԵՐ.—

Ամսոյս 11 ին կիրակի օր ժամը 4.5 ին չ. Յ. Դաշնակցութեան Դիւպլին մէջ Տիար Տօքթ. Բարունակ Ոսկի բնորական պարտաւորութիւններու մասին խօսեցաւ։

Նոյն օր ժամը 6 ին Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան կուսակցութեան Դիւպլին մէջ յաջորդաբար՝ բնորական ու քաղաքացիական պարտաւորութիւններու ու թուրք կուսակցութիւններու բռնած դիրքերու մասին խօսեցան Տիարք Գ. մ. Թէչեան, Մ. Իփէքեան և Չ. Թապիպեան։

ԷՐՊԱՍԹԷՆ, Թիւֆէնկեան Եղսարք կր գրեն։—

Աւետիս էֆ. Թիւֆէնկեանի Տիկնոջ Թագուհի հանրմի թաղումէն վերջ, անոր հետ թաղուած քիւրճի առնելու համար, գիշերանց Տ. Սուրէն Բանանային գաղաւն, կերպով գերեզմանը բանալուն մասին արուած լուրը քաղաքի սուտ ու զորպարտութիւն մըն է։ Մեր այսինքն թիւֆէնքեաններու գիտակցութեամբ բացուած է ու թաղման առթիւ մոռցուած իրերը հանել յիշեալ Տ. հօր միջոցաւ արուած է, նոյն տակ պահուելէն աւելի աղքատի տրուելի նպատակաւարմար նրկատելով։ Թող ամէնան պատիւներու հետ խաղաղ փորձողներ։

(Ծ. Խ.) Մենք, ևս համոզուած գոյալըցած ենք թէ Տ. Սուրէն հայր անմեղ է այս էջին մէջ։

ՎԷՋԻՐ ՔԵՓԵՐԻԷՆ, մեր թղթակիցը՝ Պանդուխտ կը գրէ։—

Փետրուարի 19 րդ. օրը տեղս ժամանեցին Ամասիոյ միւթէտարիֆն ու տեղւոյս նորրինար Դաշնակցամբ մեծ հանդիսաւորութեամբ։

Յաջորդ օրը (փետ. 20) բանախոսութիւն մը լրացւեց Երեւանի միւթէտարիֆ կառավարութեան չէնքին մէջ, նիւթ ունենալով «Իթիքիմատ կուսակցութիւնը»։

Ժողովուրդին ներկայալըցած է անոր գործունէութիւնը շատ փայլուն դիմակով՝ մոռնալով այս 3.3 կամ 4 տարուան ընթացքին մէջ բացայայտ կերպով անոր ունեցած յոռի գործունէութիւնը։

Յարգելի Միւթէտարիֆին պատասխանած է Վեր. Մովսէս էֆ. Տուպալեան, պաշտպանելով ժողովուրդին ազատ բաւարարութեան իրաւունքը, և «Հիւրիէթ Իթիքիմատ կուսակցութեան այս մասին ունեցած անհաշկանդ ու ազատ հայեանքը»։ Ծափահարութեամբ մը վարձացնելով իր խօսքերն ողջերթ մազթած է միւթէտարիֆ պէլին, որ քիչ վերջը Մարզուան մեկնած է։

Երեք շաբթուան քուէակութենէ յետոյ վերջացաւ Պէլեթիէյի բնորոշութիւնը։

Քուէարկութեան մէջ ամէնէն բարձր քուէները չանած են Հաճի Զատան գառմէ Մէհեմէտ էֆ. (102 քուէ) և Բէչրէֆ գառմէ Հաճի Սայիտ էֆ. (93 քուէ) բաց զայլ մագամ պէյր տառնք ի վաւերացնելով գործի նրաւորած է 61 տկան քուէ չահող Թիւթիւնէի ողյու Սայիտ և Շիրինեան Թափաննէս էֆէնդիները, ինչպէս նաև 46 քուէ ունեցող Սարաֆ գառմէ Հաճի Հազրէ էֆէնդին։

Այս ընթացքը արդեօք սահմանադրու-

որ օրէնքին կը համապատասխանէ: Չի ժողովում բակի թէ ժողովրդային բողոքի ալ կարեւորութիւն չ'ընծայուիր:

ԺԱՄԱՆՈՒՄ ԵՒ ՄԵԿՆՈՒՄ

Սերատարոյ վսեմ, կուսակալը, որ անց հալ չարթու վ. Բէօփրիւ և Մարզուան և այլ շրջանները գացած էր տեղէն անց-նելով, ամսոյս 9 ին ժամանեց և գիշեր մը հիւր մնալով մեկնեցաւ իւր պաշտոնատեղին:

Թողաւ արժանիաւոր առաջնորդ Տ. Շաւարշ վարդապետ կաթ. պատգամաւորութեան առթիւ ունեցած երկարատեւ բացակայութենէն անցեալ շարթու իր պաշտօնատեղին վերադառնալու առին գիշեր մ'անցուցած է քաղաքիս մէջ: Փափաքելի էր որ իր օգտաւոր քարոզ-ներէն բաժին մը հաներ Ամասիացիներու:

ԲԳՆՈՒԹԵԱՆ ԶՈՇ ՄՂԱՍՏՈՒԱՆ

Ամսոյս Այն, քաղաքիս մեծ կամուրջին վրայէն Շիրվանդի 15 - 18 տարեկան թուրք աղջիկ մը ինքզինքը գետին կը յանձնէ: Այս վտանգին ի՛տեա քանի մը հայ երիտասարդներ անմիջապէս կը նետուին գետ ու աղջիկը խեղդամահ ըլլալու մօտ վիճակի մը մէջ կը հանեն գետէն և յետոյ պէտք եղած դարմաններուն դիմելով աղջիկը կ'ազատեն մահէն: Կ'իմանանք թէ իր կամքին հակառակ, բռնութեամբ չի սիրած մէկուն հետ ամուսնու-ցնել ուղտելուն ճարտար խեղդամահութեան դիմած է:

ԻԹԻԼԱՅԱԿԱՆՆԵՐ

Շաքարթէ մ'ըլեր քաղաքս գտնուող Իթիլաֆական բրոպականտիստներու բանախօսելու հրաման չի տրուեցաւ կառավարութեան կողմէ. սակէ զատ խիստ հակողութեան տակ առնուեցաւ անոնց Գլխաւոր: Անցեալ իրիկուն ներքին խօ-

սակցութեան մը պարագային ներխայ գտնուող Իթիլաֆականներու և Իթիլաֆականներու մէջ պզտիկ միջադէպ մը պատահած է, քաղ անմիջապէս առանց տխուր հետեանքներ ունենալու առաջը առնուած է:

Քանի մը օր առաջ կառավարութեան հակողութեամբ այդ բրոպականտիստներէն երկուքը Սամսոն զրկուեցան: Միւս երկուքը որ Զիլէ գացած էին, անմիջապէս կառավարութեան կողմէ վերադարձուած են տեղս:

Այս ամէնը սահմանադրական երկրի մը մէջ ինչո՞ւ կ'ըլլան, չենք հասկնար:

ԹԵՄԵԹԻԻ ՏՈՒՐԲ ՎՃԱՐՈՂՆԵՐՈՒ

1328 տարուայ թէմէթիւ տուրք վճարողներու անուան ցուցակը յարժար վայրեր փակցուած են. անոնք որ արհեստով կ'ըրազին ու չեն արձանագրուած տուարին մէջ, դիմելով թող արձանագրուին: Եթէ ոչ տուգանքի կ'ենթարկուին յետոյ:

Այս տուրքը պիտի գանձուի երկու մասնաւորութեամբ, Մարտ և Սեպտեմբեր ամիսներու մէջ: Այս պայմանաւորման մէջ չ'ըմբողջներու հարիւրին 20 պիտի տար-դուի, նոյն տուրքի օրինադրի 12րդ յօդուածը տրամադրութեան համաձայն:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ ՈՒ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Յաջորդ թիւով թերթիս վեցամսեայ շրջանը քոյորուած կ'ըլլայ. կը հրաւիրենք մեր բոլոր բաժանորդներն ու գործակալներն որ անպայման փութան իրենց առկախ հաշիւները կարգադրել:

Արտատպ՝ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱԳԻՊԵԱՆ,

Խմբագրապէս՝ ՄԻՆԱՍ ԻՓԷԲՃԵԱՆ,

Տպ. ՅՈՎ. ՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԸՄԵԱՆ,

ملت معصیت الهیهی مستوجب بر سئو ظن و
تهمت باوینده هیچ بر وقت طرفدار دکلدر . و
او مسئولیت آلتنه بر قول مجردله گیرمز چونکه
بیلیمزکه لا طاعته للمخبرق عند معصيته الخالق
والسلام علی من التبع الهدی .

حریت و ائتلاف فرقه‌سی

مرخصلرندن

محمد شوکت

* *

شئون لوا

حریت و ائتلاف فرقه‌سی

بر هفته‌دن برو شهرمزمده بولسان حریت
و ائتلاف مرخصلری قلوبلرنده قونفرانس
ویرمک تشبثنده بولمشلر سده حکومت مرکز-
دن الدینی امره استناداً قطعاً مساعدده ایجاب
کبی قلوبلرینی دخی بولیس و ژاندرمه افرادیله
تحت محافظه به النمشدر .

کچن کیجه مذکور قلوبده بر قونفرانس
ویریلیر ایکن اتحاد و ترقی جمعیتی افرادندن
بعضیلری اثنای قونفرانسه بر طاقم اعتراضلر
ایله نظام سزلانی موجب اولمشلر ایسه ده بولیسک
مداخله سیله رسوئه نتیجه به وارمزدن اوکی النمشدر .
اولکی کون دخی حکومت ، مومی الیهیم
مرخصلری ژاندرمه نظارتی تحتنده صامسونه
کوندردیکی کبی توقاده کیدن رفیقلری دخی
حکومت محلیه طرفندن تحت الحفظ صامسونه
کوندراشددر . شودور مشرومایتنده بوکبی احوال-
لک اجرایی بک غاریبدر .

سه کز قلبکز هانکی طرفی التزام ایدی یورسه او
طرفه وربرسکز . شبهه سزکه - یالکز بز دکل
حکومت بیله - زک اوزریکزه باشقه درلو بر
تضیق یابه ماز . چونکه عنایدیلر قانوناً حردر .
و بو حریت حرکتکزی بوتون موجودیتکزه
محافظه ایتدیککزدن طولایی هیچ بر قوت .
هیچ بر صورثله سزی بو حق صریحکزدن منع
ایدرمز . ایتک ایسترسه امین اولکزه افندیلر !
بو حرکتنه مشروطیت نامی ویرلمز .

جریان ایدن احوالی کندی کوزیکزله کور
بیور ، قولاغکزله ایشیدیورسکز .

شو بوقاروده عرض ایتدیکمز صلاحیتکزی
استعمالده سزی حر بر اقیورلرسه امین اولکزه
مشروطیت ایچنده سکز . عکسینی کوریورسه
کر استبداددر .

مشروطیتی محافظه ایده جک حکومت دکل
ملکدر .

بر ملت که حقوق اساسیه‌سی محافظه‌دن عاجز او
لور . او ملت اقراضه محکوم اولور .

افراد ملتک ائک عقالمیسی بن دکلیم ، ایچکزه
بونجه علما ، بونجه عقلا موجوددر . مراجعت
ایدیکز صوراکز . خلاف نظام و قانون امر-
لره اطاعت ایتک مجبوریته آلیه‌سنده بولمادیفکزی
دوبه جقسکز اونک ایچون عزیز وطنداشلرمز !
حکومت بزی سوزدن منع ایتکله فنا بر فکره
سالک اولدیفمز اکلاشلر سون بز ادعایمزی سو
بله بوب مضر ادملر اولدیفمز ملت نظرنده تعین
ایدرسه ملتک هر درلو حکملرینه منقادز یوقسه

عموم و طنداشلرمزه بر ایضاح خالصدر

فرقه من نامنه مبارک مملکتکز بولنان اماسیه به کلدک . مقصد من مشروطیتک عموم عثمانیلره بخش ایندیکی حقوقدن بالاستفاده سزله بعض ایضاحات و پروب حاکمیت ملیه تک زمان اجرایی بولن شو کونلرده نه صورتله بر خط حرکت اتخاذ ایتمه کز ایجاب ایده جکی کوستره مکرر . حکومت محلیه ، مافونندن آلمش اولدینی امرلره عطفاً ایچیکزه کیروب سویله مکه لزوم کوردیکم بر طقم حقایق افشادن منع ایتدی . شبهه سزکه بو حرکت قانونی بر حرکت دکلدر . چونکه بر کتله ملیه نامی آلمه بحق مستحق او لان فرقه من ، خفی بر جمعیت فسادیه دکلدر . پروغرائمز شورای دو تنجه ترویج ایدلکدن صوکره مجلس وکلا قراریله عرض عتبه علیا قلمش ، اراده سنیه به اقتراان ایتش و قانون ملتدر . او حق قانونیمزه اغتراراً و مخالفت مو- تعنده بولدیفمزدن مساکمزه اشتراک ایتک ایستهین اولاد وطنه پروغرائمز ایضاح ایتک و حکومت حاضره اتحادیه تک پروغرائمی دکل اجرائاتی تنقید ایتک حقمندر . چونکه حکمو- متی درت سنه دن بری درعهده ایدن بر فرقه تک کاغد اوزرنده اولان مسلکی دکل جهت تطبیقه سنه کی موفقیته و عدم موفقیته باقق ایجاب ایدر . هیکر کوریورسکرکه اعلان مشروطیت دن اعتباراً بو گونه قدر معزز وطنمزه بر را- حت کون کچمه دی . بو قباحث هیچ بر وقت مشروطیته عطف ایدیلنه من . آنجق انتخابانده کی سوء استعمالاته وجدان ملتدن ظهور ایتمهش بر مجلس ملینک وجوددن ایلری کلمشدر . کر چه مجلس ملیمزه ملنک مقدراتیله علاقه دار بو لنوده هر درلو جبر و تضییقدن اجتناب ایتمه به رک حقوق ملتی مدافعه به قیام ایتش بر چوق ارباب فضل و عرفان موجود بولنش و بتون موجودبتلریله نهایت قدر مسلکده ثابت قالمشله ایسه ده اسف که اکثریتی احراز ایتمه دکلرندن عجمیک یوزندن یونجه غوائل احداث ایدنلر راس کارده قالمشدر . بو دفعه حکومتله مجلس اره سنسده وقوعبولان اختلافدن طولایی اراده سنیه حضرت پادشاهیلله اوچ آی ظرفنده تکرار اجتماع اتمک اوزره مجلس فسخ ایدیلنجه ملتک منور- لری شبهه سزکه بوندن بویوک بر حظ مسرت دویمشله زیرا خلیفه معظم افندیمن بو اراده لریله موجود اولان اختلافاتک صورت حلی خصوصنده ملتی (حکم) موقعنه قویمش اولدیلر . معلومسکزدرکه پادشاهمنز افندیمن - بوتون مشروطی پادشاهلر کی مقدس و غیر مسئولدرلر . بتون فرقه لریک فوقنده بر موقع عال العالده درلر . فرقه کی کوچوک شیلره قطعاً و قاطبه تنزل بیورمازلر . بناءً علیه (حکم) موقعنده بولنان سز افراد ملت درت سنه ظرفنده جریان ایدن احوال داخلیه و خارجیه مزدن ممنونه کز سنه رایبکزی اتحاد و ترقی فرقه سنه ویررسکز . دکل

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՊԵԱՆ

Ա.Մ.Ս.ՍԻՍ.

Բոկի գորուն եւ պրին նաեւ սեղի-
ջոյս արհեստական ասամներ շինելու
Ամերիկեան մեքոսը սորվիլ ուզող
բոլոր ասամարոյժներու կը յայ-
տարաւէ թէ ինի պատաստ է ալ
մեքոսը սորվեցնել նպատաւոր
պայմաններով:

سیغورطه جی

سیمون قارقیان

آماسیه

آلیانسه عمر سیغورطه می لانتاشه حریم

سیغورطه قومپانیه لرینک اجتی در.

مناسب شرائطله هر نوع سیغه. طم بشاری

یاپار. آرزو ایدنلر بر دفعه تجربه ایتسونلر

چیشیان ارتین اگا دکنک اتصلنده باتمانی

•• (الی) بارهیه معدن کوری صاتیور.

هر کس فرصتدن استفاده ایتسون.

ՓՈՒԹԱՑԷՐ ԱՆՄԻՋԱՊԵՍ

ԴԻՄԵԼ

ԿԱՐԱՊԵՏ ԱՅԿԱԶԵԼՆ

ԶԻՆԱ. ՎԱՃԱ. ՌԱՆՈՅԸ

ԲԱԼԸԳ. ԱՇԸ.—ՍՍ.ՄՍՈՆ

Կր վաճառե ամեն կարգի ու ամեն տե-
սակ՝ փամփուռ 0 | 25 գեղջուլ: Թող դի-
մեմ, բոլոր առիթէն օգտուիլ գիտցովները
վասան ըլլալով թէ իրենց շահը նկատի պի-
տի առնուի միշտ: Օրն փորձեցեք եւ հա-
մոզուեցեք:

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

طشره اجنتلریمز

Մարզուան.- Տիար Անդրանիկ Դյսրեան

تحریرات مدیری محمد رفعت بك چوروم

Զօրում.- Արժ. Տ. Անանիա Քեյ. Տիվանեան

Վեզիր Քեօփրիւ.- Տիրք. Յովսէփ Քիրճեան
եւ Գ. Սեօյեմեզեան

قوميسر حافظ افندی .- سیواس

Սիվազ.- Տիար Արամ Ակինեան

Պաթրա.- « Նճան Շիրինեան

Պէյրուք.- « Կարապետ Սափրիչեան

Լամսոն.- « Վահան Աճաճանեան

Զարամպայ.- Տիար Մինրան Բրուսեան

Զիլե.- Տիար Մանուկ Թօքալեան

Տրապիզոն.- Տիար Սեփան Պալեօզեան

Սիւմ-հանի գիւղ « Սեդրապ Համալեան

Սոնկուրլու.- « Հրանդ Աեփսեան

Զարա.- Տիար Կրպ. Ասասուրեան

Կարին.- « Հայկ Մանկասարեան

Քիլի.- « Մարտիրոս Մրապեան

Մուշ.- « Հայկ Միրինանեան

Օրսու.- « Սեփան Գասապեան

Բալու.- « Արժ.Տ. Սուրէն Քեյ. Տերեան

Թոգաս.- « Մկրտիչ Մեհեճեան

Հեռէկ.- « Կայծակ Գարագաշեան

Նիկիսար.- « Սեփան Քեփեան

Կ. Պոլիս.- « Յակոբ Աւետիսեան

« « Հմայակ Արամեանց

Կիրասոն.- « Անտոն Սոմունեան

Կեսարիա.- Տիար Մինաս Մինասեան

Գաւրեմոնի.- « Յար. Փափազեան

« « Աղեմ. Կիւլպենկ ան

Սոզլաս.- « Բարսեղ Ներունեան

Արաբիք.- « Մինրան Կարգապեան

Պալմէսիւր.- « Անուշաւան Սահակեան

Հալեպ.- « Օճէիկ Թոպաբեան

Ռոսսսրո.- « Օր. Նունիկ Ա. Վեռնդեան

Էսկիեհնիր.- « Մուշեղ Էմիրխանեան

Աֆրոն.- Գարահիսար Տիար Սարգիս Տե-

միրեան

ԱՄԱՏԻՅԷ

شرائط اشترا
بر سنه لکی بر مجید
النی آیلنی یارم مجیددر

صاحب امتیاز و
مدیر مسئولی
حایقازون طیبیان

سر محردی مناس ایکیجیان یاخود

طشره منادیسی

سیاسی فی ادبی اقتصادی و اخلاقی عزته در
هر اون بش کونده بر نشر اولنور

نومرو ۱۱

۱۵ مارت ۱۳۲۸

برنجی سن

مختویات

عاشق زینل

تربیه اجتماعی

حریت و اشتلاف فرقه سی

عموم وطنداشلمزله بر ایضاح خالصدر

[مرخصلندن محمد شوکت

شئون لوا

مطبعه مزده ترکیه ارمینیجه رومیجه فرانسیزجه و انگلیزجه ایسانلریله هر نوع اعلانات،
اوراق تجاریه، قارت ویزتله، مکتوب باشلری، کتابلر، غزتهلر و مطبوعاته عائد سائر هر نوع
ایشار غایت تمیز و مزاق اوزره طبع اولنیور. مقصد یکانه مز محترم مشتریلمزی نمون
قلماقدر. هونانیان و یاردیمیان شرکاسی

Տպարանիս մէջ Տանկերէն, Հայերէն, Յունարէն, Ֆրանսերէն, եւ Անգ-
լիերէն լեզուներով ամէն տեսակ Ազդեր, Վաճառականական քղթեր,
Բարս վիզիթներ, Նամակազուխներ, Գրքեր, Թերթեր եւ տպագրական
ուրիշ ամէն տեսակ գործեր խիստ մաքուր եւ ճշգրիտ որ կը տպագրուին:
Սիակ նպատակնիս է զոն քողով յարգելի յաճախորդները:

ՅՈՎՆԱՆՆԱՆ ԵՒ ԵԱՐԴԻՄԻԱՆ

آماسیه ده

مطبعة هونانیان و یاردیمیان